



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17053

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 141-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/87-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեժլումյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Գևորգ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Դավիթ Գյուրջյանին (արտոնագիր թիվ 1897) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

04.07.2017թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 03.07.2017թ. որոշումը (**այսուհետ նաև՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 3-ի հերթական դատական նիստում դատական նիստի ընդմիջումից հետո պաշտպան Դավիթ Գյուրջյանն առանց նախագահող դատավորի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը:

Դատարանը՝ Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքը և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 73-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 314.1-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 8-րդ կետը, 5-րդ և 7-րդ մասերը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4-րդ գլխի 4.1 կետը, գտել է, որ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 2017թ. հուլիսի 3-ի դատական նիստի ժամանակ փաստաբան Դավիթ Գյուրջյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականություններն, ինչով խոչընդոտել է դատական նիստի

բնականոն ընթացքին՝ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Որոշմամբ Դատարանն արձանագրել է, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանի դրսևորած վարքագիծն, այն է՝ առանց դատական նիստը նախագահողի թույլտվության դատական նիստերի դահլիճը լքելը, դատական նիստի կարգի խախտում է, ինչի համար դատարանը փաստաբան Դավիթ Գյուրջյանի (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) նկատմամբ կիրառել է դատական սանկցիա:

Դատարանը 03.07.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. «Ամբաստանյալներ Արամ Հակոբյանի, Վարդան Գերավետյանի պաշտպան Դավիթ Գյուրջյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 18.07.2017թ. թիվ 201-Ա/ԿԳ-17053 որոշմամբ՝ փաստաբան Դավիթ Գյուրջյանի (արտոնագիր թիվ 1897) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով

21.07.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Նախապատրաստող անձի կողմից Դիմողին ներկայացվել է գրավոր առաջարկություն՝ գրավոր բացատրություն և /կամ/ ապացույցներ ներկայացնելու մասին, որին ի պատասխան ուղարկվել է թիվ ԵԷԴ/0050/01/17 դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Փաստաբան Դավիթ Գյուրջյանը կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում բացատրություն չի ներկայացրել :

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և հայտնել է, որ թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով 03.07.2017թ. նշանակված դատական նիստին մասնակցել է: Պատասխանողը հայտնել է, որ իր կողմից դատական նիստերի դահլիճը ընդմիջումից հետո լքելը և այլևս չվերադառնալը պայմանավորված եղել մի շարք հանգամանքներով: Պատասխանողը նշել է, որ առաջին պատճառը Դատարանի ապօրինի գործողություններն են կապված իրենց ամբաստանյալների հետ և կոնկրետ պաշտպանների իրավունքները սահմանափակելու հետ: Մասնավորապես նա նշել է, որ խոսքը վերաբերում է Դատարանի կողմից դատական նիստերի դահլիճից ամբաստանյալներին հեռացնելու մասին, այն բանի համար, որ վերջիններս ոտքի չեն

կանգնել՝ առանց ճշտելու վերջիններիս ոտքի չկանգնելու պատճառները: Պատասխանողը նշել է, որ իր պաշտպանյալներից մեկը օրինակ ոտքի չի կանգնել առողջական խնդիրների պատճառով: Իսկ իրենց՝ պաշտպաններին, հնարավորություն չեն տվել հայտարարություններով, առակություններով հանդես գալ: Պատասխանողը նշել է նաև, որ չորս ամբաստանյալների պաշտպանների բացակայության պարագայում դատարանը պարտավոր էր հետաձգել դատական նիստը, ինչը չի արել:

Պատասխանողը նշել է նաև, որ պատճառներից մեկը հանդիսացել է նաև այն հանգամանքը, որ իր պաշտպանյալները իրենց հեռացված լինելու պայմաններում չեն լիազորել իրեն մասնակցել դատական նիստերին:

Որպես երրորդ պատճառ Պատասխանողը նշել է, որ Դատարանը չի ընկալել իրենց որպես պաշտպան, ուստի չէր կարող կիրառել դատական սանկցիա իրենց նկատմամբ, իսկ որպես չորրորդ պատճառը հանդիսացել է այն հանգամանքը, որ նույն օրը՝ 03.07.2017թ., ժամը՝ 15:00 Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվելու էր իր կողմից՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Օհանյանի՝ թիվ 15804115 քրեական գործով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 13.05.2016թ. որոշման դեմ բերված բողոքը (ԵԱԲԴ/0128/11/16): Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով դատական նիստի ժամանակ ինքը փորձել է այդ մասին հայտնել Դատարանին, սակայն Դատարանն իրեն հայտարարություն անելու հնարավորություն չի տվել: Փաստաբանը հայտնել է նաև, որ երբ Դատարանը ընդմիջում է հայտարարել ինքը դուրս եկել դատարանի դահլիճից և չի վերադարձել, քանի որ ինքը պետք է մասնակցեր վերոնշյալ գործի քննությանը: Փաստաբանը Խորհրդին ներկայացրել է թիվ ԵԱԲԴ/0128/11/16 քրեական գործով ծանուցման պատճենը: Փաստաբանը նշել է, որ այդ օրը նիստից հետո ինքը այդ ծանուցումը ուղարկել է նաև Դատարանին և Խորհրդին ներկայացրել է ծանուցումը էլեկտրոնային փոստով ուղարկելու վերաբերյալ ապացույցներ: Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին Պատասխանողը հայտնեց, որ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով նշանակված մյուս նիստերին Դատարանը չի բարձրացրել իր պաշտպանի կարգավիճակ ունենալու հարցը, այդ հարցը բարձրացրել է միայն 03.07.2017թ. նշանակված նիստով: Պատասխանելով Խորհրդի անդամների կողմից բարձրացված այն հարցին, թե արդյոք Դատարանը ընդմիջում հայտարարելիս նշել է ընդմիջման տևողությունը, Պատասխանողը նշել է, որ հստակ չի կարող հիշել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

26.08.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն վերջինս գտել է, որ Դատարանը անդրադառնալով դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող փաստաբաններին և պարզաբանելով, թե ինչու թույլ չի տալիս վերջիններիս օգտվել իրենց դատավարական իրավունքներից՝ նշել է, որ նախքան փաստաբաններին դատավարական կարգավիճակ տալը, անհրաժեշտ է ճշտել ամբաստանյալների համաձայնությունը, այսինքն պարզել, թե արդյոք նրանք համաձայն են, որպեսզի կոնկրետ փաստաբանը ստանձնի իրենց շահերի պաշտպանությունը: Դատարանը հստակ դիրքորոշում է հայտնել, որ գտնվելով

Նախապատրաստման փուլում փաստաբանները դեռևս գործին չեն ներգրավել, չունեն կարգավիճակ, ուստի վերջիններս իրենց իրավունքներից օգտվել չեն կարող: Նախապատրաստողը գտել է, որ կարգապահական գործով ձեռք բերված փաստերից ակնհայտ է դառնում, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանը որպես պաշտպան իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից զրկվել է՝ Դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների յուրովի մեկնաբանության արդյունքում: Դատարանը փաստաբաններին զրկելով պաշտպանի կարգավիճակից և դրանից բխող դատավարական մի շարք իրավունքներից՝ իրավասու չէր նրանց վերագրել նաև դատավարական պարտականություններ կամ նրանց մեղադրել դատավարական պարտականությունների չկատարման մեջ: Փաստաբան Դավիթ Գյուրջյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ նրան վերագրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69, 73, 314, 314.1-րդ հոդվածների խախտումները փաստաբանին վերաբերելի չեն, քանի որ սանկցիա կիրառելու պահի դրությամբ Դատարանը փաստաբան Դավիթ Գյուրջյանին որպես պաշտպան չի ընկալել: Գործի քննության սկզբից, երբ նիստերի քարտուղարը թվարկում է դատական նիստին ներկայացած անձանց կազմը, վերջինս չի հայտնում փաստաբան Դավիթ Գյուրջյանի՝ դատական նիստին ներկա գտնվելու մասին: Այսինքն, դատական նիստի ձայնագրման կրիչի հետազոտությունից պարզ է դառնում, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանը ընդհանրապես չի գտնվել դատական նիստերի դահլիճում (կարգապահական գործը նախապատրաստողի կողմից այլ տվյալներ ձեռք չեն բերվել), ուստի դատական նիստի ընդմիջումից հետո փաստաբան Դավիթ Գյուրջյանի կողմից դատական նիստերի դահլիճը լքելու փաստը ևս չի հիմնավորվում: Վերոգրյալի հիման վրա Նախապատրաստողը եզրակացրել է, որ Պատասխանող Դավիթ Գյուրջյանի կողմից Կանոնագրքի 4.1 կետով նախատեսված հատկանիշների խախտման փաստը սույն գործում առկա ապացույցներով չի հաստատվում:

29.08.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 18:15-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Թիվ ԵԷԴ/0050/01/17 քրեական գործով փաստաբան Դավիթ Գյուրջյանը նախաքննության ընթացքում ստանձնել է մեղադրյալներ Արամ Հակոբյանի, Վարդան Գերավետյանի շահերի պաշտպանը:

2) Դատական սանկցիա կիրառելիս Դատարանը փաստաբան Դավիթ Գյուրջյանին որպես պաշտպան չի ընդունել (ընկալել):

3) Դատարանը փաստացի ընդմիջել է դատական նիստը: Ընդմիջումից հետո Դավիթ Գյուրջյանը չի վերադարձել դատական նիստերի դահլիճ:

4) 03.07.2017թ., ժամը՝ 15:00 Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվելու էր Պատասխանողի կողմից՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Օհանյանի՝ թիվ 15804115 քրեական գործով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 13.05.2016թ. որոշման դեմ բերված բողոքը (ԵԱԲԴ/0128/11/16):

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ թիվ ԵԷԴ/0050/01/17 դատական նիստի ձայնագրառման կրիչով, Պատասխանողի բացատրությամբ, ԵԱԲԴ/0128/11/16 քրեական գործով ծանուցման պատճենով, Դիմողի դիմումով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.09.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Դավիթ Գյուրջյանն փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 25.04.2015թ.: 2015-2017թթ ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 4 կարգապահական վարույթ, որոնցից մեկը դեռ չի ավարտվել, երկուսը կարճվել են, իսկ մեկով Դավիթ Գյուրջյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով: Կարգապահական տույժը մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1. կետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար»:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. «**Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու,** դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի դիմելը:»:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն. «Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի

սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ»:

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Մասնավորապես՝ նշված օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է՝ մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը:

Վերլուծելով վերը նշված կանոնի պահանջը, Խորհուրդը գտնում է, որ պետք է ստանալ հետևյալ իրավական հարցադրման պատասխանը՝ **արդյո՞ք Պատասխանող մինչև Դատարանի կողմից ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ կամ խոչընդոտելով դատական նիստի բնականոն ընթացքը:**

Ուսումնասիրելով սույն կարգապահական գործում առկա ապացույցները՝ Պալատի Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանը լքել է դատական նիստերի դահլիճն առանց նախագահողի թույլտվության:

Խորհուրդն արձանագրում է, որ նշված վարքագծով փաստաբանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իր պարտականությունների խախտում:

Անդրադառնալով սույն կարգապահական գործով պարզման ենթակա այն հանգամանքին, թե արդյո՞ք փաստաբան Դավիթ Գյուրջյանը իր վերոնշված վարքագծով խախտել է Կանոնագրքի 4.1 կետի պահանջը՝ Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Իր գործառույթներն իրականացնելիս փաստաբանն ունի ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իր վստահորդի և դատարանի առջև: Մասնավորապես, փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխիղճ ու եռանդուն կերպով՝ օրենքի և վարքագծի նորմերի համապատասխան, այլ նաև պարտավոր է ապահովել դատարանի հեղինակությունը հանրության աչքում:

Փաստաբանը դատական նիստերի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելով՝ դիմում է ծայրահեղ քայլի, որի հիմքում պետք է առկա լինի հիմնավոր և իրավաչափ պատճառ:

Սույն դեպքում Դատարանն անդրադառնալով դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող փաստաբաններին և պարզաբանելով, թե ինչու թույլ չի տալիս վերջիններիս օգտվել իրենց դատավարական իրավունքներից՝ նշել է, որ նախքան փաստաբաններին դատավարական կարգավիճակ տալը, անհրաժեշտ է ճշտել ամբաստանյալների համաձայնությունը, այսինքն՝ պարզել, թե արդյոք նրանք համաձայն են, որ պեսզի կոնկրետ փաստաբանը ստանձնի իրենց շահերի պաշտպանությունը: Դատարանը հստակ դիրքորոշում է հայտնել, որ գտնվելով նախապատրաստման փուլում փաստաբանները դեռևս գործին չեն ներգրավել, չունեն կարգավիճակ, ուստի վերջիններս իրենց իրավունքներից օգտվել չեն կարող: Այսինքն, փաստաբան Դավիթ Գյուրջյանը

որպես պաշտպան իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից զրկվել է: Դատարանը Որոշումը կայացնելիս փաստաբան Դավիթ Գյուրջյանին որպես պաշտպան չի ընդունել (ընկալել): Խորհուրդը գտնում է, որ փաստաբանը՝ զրկված լինելով պաշտպանի կարգավիճակից և դրանից բխող դատավարական մի շարք իրավունքներից, ստիպված է եղել դիմել ծայրահեղ քայլի և լքել դատական նիստերի դահլիճը:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողն իր այս գործողությամբ նաև փորձել է ապահովել իր ներկայությունը մեկ այլ նիստով: Պատասխանողը այդ օրը ունեցել է նաև նշանակված այլ դատական նիստ և փաստաբանը իր կամքից անկախ հանգամանքների պատճառով հայտնվել էր մի իրավիճակում, որի պայմաններում պաշտպանը պարտավոր էր մասնակցել երկու գործերով նիստերին՝ նպատակ ունենալով ոչ թե դատավորի նկատմամբ որևէ բացասական վերաբերմունք ցուցաբերել, այլ՝ մեկ ուրիշ գործով, իր մեկ այլ վստահորդի օրինական շահերի պաշտպանությունն ապահովել, քանի որ վերջինիս բացակայությունը իր վստահորդի համար կարող էր առաջացնել բացասական հետևանքներ: Նման հանգամանքներում փաստաբանը, ներկայանալով թիվ ԵԷԴ/0050/01/17 գործով դատական նիստին հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր միջնորդությունը կամ հայտարարությունը, քանի որ Դատարանը նրան ելույթ ունելու հնարավորություն չի ընձեռել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ թիվ ԵԷԴ/0050/01/17 դատական նիստի ձայնագրառման կրիչի ուսումնասիրությունից պարզ չէ արդյո՞ք Դատարանն ընդմիջում է դատական նիստը և ինչ տևողությամբ: Պատասխանողն իր բացատրությամբ հայտնել է, որ փաստացի ընդմիջվել է դատական նիստը, բայց ինքը չի կարող հստակ հիշել Դատավորի կողմից ընդմիջում հայտարարելու կամ դրա տևողությունը նշելու հանգամանքը: Նման պայմաններում, հիմք ընդունելով Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասը, նշված հանգամանքը մեկնաբանվում է հօգուտ Պատասխանողի:

Վերոնշյալի հաշվառմամբ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանը գործել է ողջամտության շրջանակներում և ոչինչ չի հուշում, որ նա ունեցել է դիտավորություն անհարգալից վերաբերմունք ցուցաբերել դատարանի նկատմամբ, ուստի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Դավիթ Գյուրջյանի արարքում առկա չեն Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Միաժամանակ Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ Պատասխանողի այն պատճառաբանությանը, որ իր պաշտպանյալները իրենց հեռացված լինելու պայմաններում չեն լիազորել իրեն մասնակցել դատական նիստերին:

Խորհուրդն արձանագրում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը, հետևաբար օրենքով արգելվող այդպիսի վարքագիծ դրսևորելուն ուղղված վստահորդի հանձնարարությունն օրինական չի կարող լինել: Ոչ օրինական հանձնարարությունն ընդունելուց փաստաբանը պարտավոր է հրաժարվել: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, եթե ի սկզբանե այն հակասում է օրենքին կամ վարքագծի կանոններին: Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում, փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ

հողվածի 1-ին մասի, 39.7-րդ հողվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հողվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 18.07.2017թ. թիվ 201-Ա/ԿԳ-17053 որոշմամբ փաստաբան Դավիթ Գյուրջյանի (արտոնագիր թիվ 1897) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան